

անցած, նոյն ճանապարհի վերայ նորից հանդիպում ենք մի կանգնած խաչքարի, որ գրումէ «կանգնեցաւ խաչս բարեխօսութիւն Զալեխին և եղբարց իւրոց»:

Գնալով վերջապէս ես կանգնում եմ խոր ձորի մէջ մի առուակի ափում, որ հոսում է հիւսիսից հարաւ դէպի Մալիշկայ գիւղը և դէպի Արփաշայ գետը: Առուակից բարձրանում եմ նորա ձախ ժայռոտ բարձր ափի վերայ, ուր ճանապարհը իսկոյն թեքւում է դէպի հիւսիս և անցնում է անտանելի քարակոյտների միջով և ուր կաքաւներն անգամ դժուարութեամբ են շարժւում: Ահռելի քարակոյտներն ահագին տարածութիւն են բռնում, սկսած հիւսիսային կողմում Դալի խաչից սարից դէպի հարաւ մինչև Մալիշկայ և Մօզ գիւղերը և արփաշայ գետը:

Այսպէս ահա աստիճան առ աստիճան մօտենում եմ այն սրբավայրին, որ մեծ անուն և հռչակ ունի ամբողջ Երևանի նահանգում և նորանից դուրս: Այդ արգեազու Ասրէ խաչ վանքն է:

(Շարունակելէ)

ՔԱԶԲԵՐՈՒՆԻ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՆԿԱՐԱԳԻՐ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆՈՒՅ

ԵՒ

ՎԻՃԱԿԻ ՆՈՐԻՆ ԲԱԳՐԵՒԱՆԴԱՅ.

(Շարունակելէ).

Գ.

— Ահա մի եօթնեակ ևս անցաւ, մի օր ասաց Հասանխանը, աչքս Բօլիխանի ճանապարհը մնաց. ի՞նչ եղաւ նա. ես ուղարկեցի նորան ևս 1000 զօրքով որ ինքն զվաղարշակերտ, Մաղա-

զի, Աղիովիտ և Բագրեանդ գետի առնէր, անցնէր քան զԱորպատական, կապուտ կողոպուտը ինձ բերելով: Իսկ այժմ նա ոչ ինքն և ոչ ևս նորա ձայն... եկաւ: Մթթէ անկարող գտնուեցաւ այդ գործէն սպիտակ երես դուրս գալ:

Այս անգամ նորա ոտքը քորի դիպաւ: Այն նա անկարող է հայոց մի բուռն գնտի վրայ յաղթանակ տանել, երբ նորա մի սիրտ, մի հոգի, մի մարմին եղած են. նա չէ, նորա եօթ պապն էլ գայ, չի կարող քանգել ամուր պարիսպը:

Բօլի-խանը շատ շուտ կատարեց իւր հրամանատարի հրամանը, բոլորովին գերելով յիշեալ չորս գաւառաց հայ տներն ու տնակալ քրդերը, որը լինէին թուով և ցուցակաւ աւելի քան 4000 տուն, զորս չարաչար վարելով զտիւ և զգիշեր հասան Ալիկօր և Ղումլիճայ գիւղօրէից գէմ, որտեղ հանգիստ առան կամ լաւ է ասել նօթութենէ և յոգնածութենէ նուազեալ ինկան: Ամբողջ իրաններուն ուժը գնացած էր, հակառակնօցա վարիչների ջանից, որ սլաքն ու մորակը մեծ պաշտօն կրկատարէր, այլ ևս չկարողացան ոտք ոտքի տեղ փոխել:

Թուրք ու հայ այնքան շատ էր, որ մէկը մէկելին չէր ճանչնար, իրարու ձայն չէին լսեր. ամբոխին գոռում գոչումը, լացն ու աղաղակը հիւլէով ծածկուած մթնոլորտին հաղորդուելով ահաւոր և միակերպ արձագանք ձայնից լսուէր: Այդ խառնաշփոթ միջոցին մի քանի խելահաս անձինք միաբանելով՝ իրենց դառնաղէտ վիճակը մի սուրհանդակով վաղ ընդ փոյթ Իւչ—քիլիսէ վանուց միաբան Գեր, Խաչատուր վարդապետին յայտնեցին, խնդրելով որ արդէն — պարսիկ զօրաց խարազանի, սրի ու բրի տակ մահացանք, որ կոպառնայ մեղ տարագիր առնել. թողած, թափած ամենայն ինչ՝ որ բուռն մեր արիւն քրտանց վար վաստակն էր: Ի սէր խաչեցիւղյն մեր Յիսուսի, միզնից շնորհք չկայ, մի հնարք ունիս սերկեան ի գործ դիր քաջարամբք վասն մերոյ փրկութեան, որպէս ի վաղուց հեռէ ծանօթ եմք Ձերդ երկնաձիր քաջագործութեան շնորհաց:

Թէ և նոյն մասնաժողովին պահապան զինուորք չէին նկատէր, այն ստուար խուժանին մէջ, այնու ամենայնիւ պատրաստի գրազէր թուղթ ու թանաք չգտնելով՝ սոյն բանաւոր պատուէր

Կօշտօ անուան մին յանձնառու եղաւ տանել, որը սրարշաւ գնալով 25 ռուպէէն վերջ ձիու վրայէն վար իջաւ վանուց պարտակ հիւսիսային դրան առաջ, լկամը դռնապանին ձեռք տալով՝ արագ արագ վազեց մտաւ Գեր. Խաչատուր վարդապետի ոռնեակը, գլուխն բացեց, նախշուն արախչին ձեռքն առած, աջն համբուրեց, անմոռաց պատմելով մի և նոյն բանը նորին Գերապաաւութեան: Նա ահաւոր բօթը լսելուն պէս կրակ կտրած, նստած սեղէն վեր ելաւ, հաղորդելով զայն իւր նիւալակցած. թամբեց իւր սպիտակ ծոյգ, ստըը դրեց ասպանդակը, կանչեց Աստուած, ելաւ նորա կռնակը, ուղղորդ կեցաւ. ոտից ցգլուխ զինավառեալ՝ այնպէս որ մատ տայիր հազար տեղից կրակ կթափուէր վրայէն, ինչպէս և միւս միաբանք թուով 12 վարդապետք. սարկաւազունք, չափահաս դպիրք ընդ որս և Պահլաւունի Ալէքսանեան Պետրոս աղայն հնգետասան արամիք իւրով:

Իրենց կարեւոր ռազմավթերքն առած, որ Օսմանեան փախըստեայ զօրքերից էր մնացած՝ ասաց Խաչատուր վարդապետը. «եղբարք, այսօր արիւնն աչք առած, կերթանք պատերազմի դաշտ, յաղագս ազատութեան մերս գերի վարեալ փոքրիկ հօտի. ձեր եռանդը զիս կըսրտապնդէ. օ՛ն անդր յառաջ, քաջ գիտեմ այսու, օգնութեամբն Աստուծոյ, որ Ս. մենաստանի, Ժողովրդեան և մեր անձանց իսկ հայրենեացս ծոցը կանգուն պահելու իղձը պիտի իրագործուի»:

Զայս ասելով և զիրեարս խրախուսելով քայլեցին ընդդէմ թշնամեաց, ոմանք ձիաւոր, ոմանք հետիոտտ, եփրատ գետն կամուրջէն անցան, որ ասպարիզափ հեռի է ի նոցանէ. Նպատ լերան արևմտեան կողմէն Բօլի-խանի ճանապարհը կտրեցին, որ եկաւ հասաւ իրենց: Խաչատուր վարդապետ ձայնեց զօրութեամբ հոգւոյ— այ Բօլի-խան Բօլի-խան, ուր ըստ պարսկենի հին սովորութեան առած տանիս մի մասն հայոց ազգէն, նման ոչխարաց, որք սահողիւ ցրուեալ կան: Արդ պատրաստ կաց ասելով ամենքը մէկէն մի բուռն կրակ տուին թշնամեաց վրայ և յարձակուեցան սուլիննորով՝ որոց ցրուելով, ի նոցանէ երկուքն խողխողեցին և զբաղումս վիրաւորեցին, ինքն Բօլի-խանը 50

Թիկնապահօք փախցնելով Գրէքօլ (տափարակ կամ անեղջիւր բլուր) ըստուած բլրակի գլուխն, որ Եղեգնիս (բօհտի) գիւղի հարաւարեմտեան կողմը կը գտնուի: Հետոյ հետէ Թշնամեաց հետ կուռելով գերեաց ճայրը դարձուցին դէպի վանք, որը ազատուելով գաղանի ճիրաններէն վանուց պարսպին տակ կուտուեցան: Կռիւր դեռ վերջացած չէր: Մօլլասիւլէյմանցի Կօշտօի աղջիկ Շաւշանը մի պարսիկ զինուոր, որ վաղուց նկատած էր նորան, մերձեցաւ իւր գաւազն առաւ ու փախաւ դէպի Նաւրուզ սարը, որի (օրիորդի) գեղեցկութիւնը այդքան բազմութեան մէջ 15 օրուայ բոլորած խօստիկ լուսնակի կը նմանէր: Օրիորդը ճշաց, մայրը գոռաց գլխուն տալով բազմութիւնը ապշած կանչեց միաբերան «տարաւ: ա՛հ, վա՛հ տարաւ»:

Խաչատուր վարդապետ կրկնելով սոյն ժողովրդական առածն «հողեղէն տարաւ զհրեղէն»։ Ինչպէս ձեռքին մէջ ճօճացնելով զոյգ ասպանդակները պերճասոսորդ երիվարի կողքերին մխեց, զօրէն արծույ հանդիսատես խուժանը ճեղքելով՝ սլացաւ, անցաւ, որը հիացեալ ասացին «հաւքն իր թեւով, օճն իր պորտով էնոր (նորա) ձեռքէն չի ազատուիր, հասաւ, հա՛ հասաւ գրող տարած աճմին, ո՛ւր պիտի պրծի»:

Յիրաւի գնդակի պէս սլացաւ, հասաւ մեր քաջ հերոսը, որ շուտով ձայն տուաւ աղջկան— մի վախճար քու պահապան հրեշտակդ, իսկ նորա հոգեառը եկաւ, փոքր ինչ կռացիր, նորա կռնակն ինձ բաց արաւ: Օրիորդը իսկոյն մի կողմ խոնարհեցաւ, հրացանն արձակեց, անվրէպ գնտակն պարսիկ զինուորի մէջքն մխուռելով՝ կակուղ պանրի նման ծակեց կուրծքէն դուրս ելաւ, գետին մտաւ: Նա մահուան դողն ինկաւ, զինք տանող ձիու վերայ վեր վեր ցատկեց, գլորեցաւ դիտապատ վար ընկաւ: Զգիտեմ առ ի՞նչ, բնազդմամբ յետ դառնալով արիաւրանչ ձին Շուշանն վերան սանձարձակ եկաւ Խաչատուր վարդապետի զինուորաց մէջ մտաւ, որը զայն առեալ տարին ծնողացն յանձնեցին:

Օրը տարաժամ լինելով՝ Խաչատուր վարդապետ յաղթութեան պսակն առած իրեններով դարձաւ ի վանք:

Այդ միջոցին հայ ու թուրք որ եկեղեցին մտած՝ ի գուճ խոնարհեալ իրենց անյագ համբայրներ զերթ արգադիր նուէր սուրբ տաճարին կրմատողցանէին. միաբան յետ դարձան Խաչատուր վարդապետի և իւր ընկերաց ոտքն ու ձեռքն ինկան, նոյնպէս իրենց երախտագիտական շնորհակալեաց հաւաստիքը տալ, որք իւրեանց անձը չխնայեցին իրենց փրկութեան համար:

Իսկ Բօլի-խան իր գլխու եկածներուն և ապաքաղդութեան վրայ կմտմտար և չէր կրնար լուծել այդ Կորդեան հանգուրձը: Քանզի կըսէր ինքն իրեն— փոքր կայծէ մը մեծ հրդեհ ծագեցաւ. մենք որ երբեմն վանքի վրայ չէինք մտածեր, այսօր յաղթող հանդիսացաւ. ալ ես իմ գլուխս ուր դնեմ, Հասան-խանին ի՞նչ պատասխան տամ: Գիտեմ, եթէ մօտն երթամ, կը պատժուիմ, իսկ թէ այսպէս գործն թեփի մէջ թողում մեծ ամօթ է ինձ: Զէ, կարելի է այն ժամանակ վարդապետներն թողլթ արին, իմ աչքերս Բօլ փչեցին, ես խաբուած եմ, ապա թէ ոչ նոքա ի՞նչ են, որ ինձ յաղթեն, Կաց միւս անգամ կերթամ, հարիւր անգամ կերթամ մինչև որ ամենքին սրիս բերնէն անցնեմ, որսս առած այնպէս երթամ առ Հասան-խան:

Նա այն գիշեր այս բանի համար իւր ցիր ու ցան եղած զօրքերն հաւաքելով ընդ ձեռամբ, ելաւ մօտակայ Բարթող լեռը Զաւալցի աշիրաթի քրդաց մէջ, ուր իւր զօրաց թիւը աւելացուց քրդերի և իւր ազգի ձիաւորներով:

Խաչատուր վարդապետի աչքունքն ևս գիշերն ի բուն քուն չմտան: Նա հեռատես մարդ էր, գիտէր անշուշտ որ թշնամին ոչ երբէք անագան, այլ ի վաղիւ անդր մեծաւ զօրութեամբ իրենց վրայ արշաւելու են: Ուստի առանց ժամանակ կորցնելու, արեւ մայր մտածին պէս կանչեց առ յինքն Ղումիկաւճախցի հիւսն Մանուկը և թեղի փայտէ ամուր թնդանօթ մը շինել տուաւ և կրկին շղթայիւք պրկեց, վեր հանեց զայն վանուց պարսպի բուրգի վրայ ամրացուց:

Երբ լուսուամութուն Բօլի-խանը իւր զօրքերով Նաւրուզի սարէն վար կիջնէր, խաչատուր վարդապետ յաջողութեամբ իւր նորակերտ թնդանօթի առաջին փորձն ըրաւ նոցա վրայ, մէկը միւսի ետեւէն և վանքն ալ անառիկ բերդի դերք ունենալով

երբէք չկարողացան մերոնց տեղէն շարժել. չնայելով որ հակառակ կողմէն ևս կարկտի պէս գնտակներ կը տեղային նոցա վրայ:

Այսպէս շարունակ 13 օր ճակատ առ ճակատ կռուելէ զինի, երբ տեսաւ Բօլի-խանը՝ որ այլ ևս անձամբ չի կրնար յաղթել նոցա, յուսակտուր չոգաւ առ Հասան-խան և պատմեց նմա իւր-Քիլիսէ վանուց ապստամբարան լինելը, Խաչատուր վարդապետի քաջագործութիւնքը և նորա փայտէ շինած թնդանօթի գործած հրաշքը, որ ստիպեց զիրենք ի փախուստ դառնալ:

Այն ատեն Հասանխան կատղեցաւ, փրփրեցաւ նման լեռնակոհակ ալեաց ծովու, կամէր փութով կլանել զնոսա, սակայն և այնպէս Խաչատուր վարդապետին բազմաթիւ ժողովրդովք որսալու գիւրին միջոցը ձեռքէ չփախցնելու աղաքաւ, նախ և յառաջ մի խաբէբայական գիր գրեց առ նորին գերապատուութիւն, օրեւի բարեկամ և խնամակալ հայր անուանելով զնա ժողովրդեան, պատուէր տար նմա իւր ազատած գերին փոքր միւս ևս կառաւարբել, չթողլով զնոսա ըստ հաճոյից իւրեանց ի յազատ կամն ելնել, երթալ ընդ որ կամիցին, ցնոր տնօրէնութիւն իւրոյ կառավարութեան:

Սակայն մոռիկ չտալով այն կեղծ ու պատիր գրոյն ժողովուրդն մի ամիս և եթ մնալով անդ, առ երկիւղի մերկացան իրենց վրայի արդուղարդը և տանց կահ կարասիքը յանձնեցին վարդապետաց ի պահ, կիսամերկ անդամօք մեկնեցան, ցրուեցան, գնացին ի Բասեան ի Տարօն, յԱպահունիս և ոմանք իսկ ի տեղիս իւրեանց:

Սորա վրայ Հասանխանը այլ ևս չկարողացաւ հանդուրժել, շուտով զԽաչատուր վարդապետ ձեռք ձգելու համար բազմաթիւ զօրքով ելաւ ի յերևանէն եկաւ ի Բայազիտ:

Զնտի Արաղստանցի Սաֆար-Ալի ոմն գաւառապետի պաշտօնիւ ուղարկեց նստիլ ի Դիասին պատուիրելով նմա նախ քան զամենայն տեղւոյն տէր Թովմաս և տէր Խաչատուր քահանայից ձեռօք գրել առ Խաչատուր վարդապետ և կոչել զնա առ ինքն. յիշեցուցանելով նմա վանականաց միայնութիւնը և իրենց բազմութիւնը, ծանր ծանր յանցանքներ բարդելով ի վերայ նորա.

կոպառնար որ եթէ կամաւ, պատուով չենէ գայ, հակառակ պարագայի մէջ վաճփն իսպառ քար ու քանդ կրնեմք իւր գլխին, կուզէ թէ եօթգլխանի էլ լինի նա:

Խաչատուր վարդապետ այս բուռն հրամանի առջև ուրիշ կերպ չէր կարող վարուիլ. ելնել փախչել, վանքն կրակի մէջ ձգել, իր կամքին հակառակ էր. ո՛չ սրէն, ոչ կրակէն, ոչ ալ մահէն երես ետ դարձնող մարդ չէր: Լաւ համարեց երթալ առ Հասանխան, թէև իւր դաստիարակ վանահայր ծերունի Սահակ արք եպիսկոպոսը շատ հակառակեցաւ յայդմ:

Քանզի ծերունին որ այն ժամանակ ծածուկ կարտասուէր, իւր բազկաթուէն ելաւ և համբուրեց նորա անվեհեր ճակատը ասելով — որդեակ, մի գնար առ անօրէնն այն, դեռ երիտասարդես, դու շատ պէտքեական մէկն ես մեր խեղճ ազգին, ես կարի ծերացեալ եմ, իմ մահս մօտ է. ետ կեցիր այդ խորհրդէն, ես քու փոխարէն երթամ, նահատակուիմ, եթէ մահն իսկ վրայ ժամանէ:

Յայնժամ արտասուաց կայլակներ Խաչատուր վարդապետի կայտառ այտերուն վրայ երեւցան՝ որը լալագին պատասխանեց «ոչ սրբազան տէր. ոչ՝ քաւ լիցի ինձ այդ. Ձերդ սրբազնութեան կեանքը՝ ինձ համար աւելի թանկ արժէ, ինձ համար սրբազան պարտականութիւն կը համարիմ, կամաւ տանել զխաչն Յիսուսի. հետեաբար անտի վախենալու տեղիք չունիմ, Աստուած կը փրկէ զիս նոցա ձեռքէն, եթէ երբէք պէտք պիտի գամ իրեն, իմ կենդանութեամբ»:

Այս աղէխարշ խօսակցութեան ժամանակ, որ բոլոր միաբանք հաւաքուած էին առաջնորդարանը, լաց ու կոծի մէջ էին:

Գեր. Սահակ եպիսկոպոս տեսնելով որ չի կրնար յետս կասեցնել զնա իւր գծած ճանապարհէն, մի սպիտակ ջորի ընծայ առած յանուն Հասանխանի, նորա բարկութիւնը զիջուցանելու համար, ընդ նմին գնաց ի Դիագին առ Սաֆար-Ալին:

Սա առջի բերան մեծ պատուով ընդունեց զնոսա առ երեսս, հինգ պահնորդներ շտապաւ ուղարկելով ի վանք, որ միւս միաբանքն չփախչեն անտի յայլուր. յառաջիկայ գիշեր ձերբակալեց զԽաչատուր վարդապետ: Առաւօտեան շղթայակապ բառ-

նայով ձիու վերայ, ուղարկեց ի Բայազիտ առ Հասանխան:

Խաչատուր վարդապետի ձերբակալումը մի մեծ փառք ու պարծանք համարելով՝ ուրախութենէն խենդացաւ, վայրագ գազան դարձաւ, որ իւր որսի վրայ վազելով, վայրկեանէ վայրկեան կամի փարատել զնա: Ահեղ բարբառով կոչեց չորից զինուորացի, որը ակնթարթի մէջ պառկեցուցին յատակի վրայ, այլ երկու մարդ գլխին, երկուք ոտքերուն նստեցնելով՝ սկսան զերդ ուռանահարի կռան գանահարել զնա դալար փայտիւք:

Այս գործողութիւնը այնքան արագ կատարուեցաւ, որ քսան ըսպէէն յետոյ արժ. վարդապետն ուշագնաց ինկած էր. անձի վրայ մի քանի արեան կաթիլներ կերեւէին, որ բերրը քամեր էին. ծեծը դողբեցուցին, սառն ջուր սրսկելով երեսին՝ զգաստանալով նստեցաւ:

Որովհետեւ՝ ոչ-քրիստոնէից պարտքն է, իւր օրէնքի տրամադրութեամբ հրաւիրել քրիստոնեայ անձանց մահմտական կրօնն ընդունել: Ուստի Հասան-խանն ալ սորանով արքայութեան ժառանգորդ գրուելու առթիւ, այդ անձուկ միջոցին առաջարկեց նմա իւր կրօնն ընդունել, տալով նորին գերապատուութեան մեծ պարգև և խան-թեառ տնտրոս, որին ինքն իսկ արժան համարէր:

Իսկ նա առ սիրոյն Քրիստոսի և իւր բանաւոր հօտի մերժելով նորա առաջարկն, վերստին շղթայուեցաւ, և բառնալով ուղտի վրայ, տարին ձգեցին Երևանայ մահապարտից բանտն:

Իսկ Սաֆար-Ալին 50 արիւնդուշտ զօրքերով հայոց միութիւնը ցրուելէ վերջ, Սահակ եպիսկոպոս առած, եկաւ ի վանք, ի նոցանէ իրենց վրէժը լուծելու:

Քանզի յայսպիսի դէպս Ղումլիճայ, Ղումլիպուճախ, և Ալիկօր գիւղօրէից բնակիչները կուգային յԵւջ-Քիլիսէ կամրանային, նոցա միաբանական ոյժերից վախնալով՝ նախ քան դամեայն աքսորեց նոցա ի Զուջան գիւղ:

Այդ բանի հոտն առնելով Աբէլ վարդապետ ստորին միաբանիւք ստանձնեցին եկեղեցւոյ սուրբ ձապաններն, թանկագին իրեղէնք և Խաչատուր վարդապետի գոյքերը ելան գիշերանց Մաղկոտայ լեռանց, Զերմնկայ սարի քարանձաւներին միոյն

մէջ պահեցին և փախան ի Մուշ ի վանս սրբոյն Կարապետի, զի մի գուցէ այնտեղ մնալով՝ մնտալուտ չարչարանաց չտոկալով մատնեն զայնս թշնամւոյն ձեռք:

Ուրեմն այստեղ մնացին միայն Սահակ եպիսկոպոս, Թալուեցի Յարութիւն եպիսկոպոս, Զուջանցի Ժամօրհնող Յովսէփ վարդապետ և Գալուստ վարդապետ:

(Հարունակելի)

Պ. Յ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ.

ԱԶԳԱՅԻՆ

Խճագործութեան Արարատ Կոմիտէ.

Հաշիւ ելից և մոից եկելեցական ծխական երկսեռ ուսումնարանին Հայոց Դարբանդու ի 1 էն Յունվարի 1888 ամի ց1 ն Յունվարի 1889 ամի:

Անցեալ 1888 ամի յունվարին, ուսումնարանիս գանձապահը ներկայացնելով հոգաբարձութեանը իւր պաշտօնավարութեան միամեայ հաշիւը, յայտնեց, որ այնուհետև ինքն անկարող է գանձապահի պաշտօն վարել, քանի որ ուսումնարանի գանձարանում ոչ միայն առ ձեռն դրամ չկայ, այլ և ուսումնարանի դրամագլխից եղած է 5 ռ. 63 կոպէկ և միւսնոյն ժամանակ ուսումնարանի գանձարանը պարտ է իրեն 13 ռուբլի, իւր սեփական դրամից ծախսած լինելու պատճառաւ:

Արդարև ուսումնարանի դրութիւնը շատ անապահով էր և մինչև անգամ ապագան կասկածելի. ահա այս էր պատճառը որ յարգելի հոգաբարձութեան միւս անդամներն ևս մի այդպիսի տագնապելի ժամանակ մերժեցին գանձապահի պաշտօնը: Ուսումնարանը պէտք էր պահպանել և հարկաւոր էր գործը կարգի ձգելու համար մենք թէև նախագահ հոգաբարձութեան, այնուամենայնիւ յանձն առանք տանել այդ պաշտօնը, ազատելու դպրոցը այն հեռեանքից, որին ենթարկուելու էր նա իւր նիւթական այդ օրինակ դրութեան պատճառով:

Գանձապահի պաշտօն ստանձնելուց ցայսօր անցել է մի ամբողջ տարի և այժմ պարտք ենք համարում ներկայացնել մեր միամեայ ելեմտից հաշիւը, ո՛չ թէ այն պատճառաւ, որ իբր հազիւ կարգացուի, այլ գաղափար տալու մեր դպրոցի ներկայ վիճակի վերայ: